ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ
ИСТОРИЧЕСКИЙ ФАКУЛЬТЕТ

YEREVAN STATE UNIVERSITY
FACULTY OF HISTORY

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹ

ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ

ИСТОРИЯ И КУЛЬТУРА

АРМЕНОВЕДЧЕСКИЙ ЖУРНАЛ

HISTORY AND CULTURE

JOURNAL OF ARMENIAN STUDIES

№ 1

ԵՐԵՎԱՆ - ЕРЕВАН - YEREVAN
ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ, ИЗДАТЕЛЬСТВО ЕГУ, YSU PRESS
2020

Հրատարակվում է Երևանի պետական համալսարանի
Պատմության ֆակուլտետի գիտական խորհրդի որոշմամբ

Գլխավոր խմբագիր՝ պ.գ.դ., պրոֆ. **Էդիկ Մինասյան**
Խմբագրական խորհուրդ՝
Արման Եղիազարյան (խմբագիր, պ.գ.դ., դոց.), **Արամ Սիմոնյան** (ԵՊՀ Հայագիտական հետազոտությունների ինստիտուտի տնօրեն, ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ, պ.գ.դ., պրոֆ.), **Աշոտ Մելքոնյան** (ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, պ.գ.դ., պրոֆ.), **Արտակ Մովսիսյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Ալբերտ Ստեփանյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Հայկ Ավետիսյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Հայրապետ Մարգարյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Լևոն Չուգասզյան** (արվեստագիտ. դոկտ., պրոֆ.), **Համլետ Պետրոսյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Իգիթ Ղարիբյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Հենրիկ Աբրահամյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Հայկազ Հովհաննիսյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Աշոտ Ներսիսյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Աշոտ Հայրունի** (պ.գ.դ., պրոֆ.), **Վալերի Թունյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Վանիկ Վիրաբյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Ռաֆիկ Նահապետյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Հակոբ Հարությունյան** (պ.գ.դ., դոց.), **Հովիկ Գրիգորյան** (պ.գ.թ., դոց.), **Մխիթար Գաբրիելյան** (պ.գ.թ., դոց.), **Էդգար Հովհաննիսյան** (պ.գ.թ., դոց.):

Главный редактор - докт. ист. наук, проф. **Эдик Минасян**
Редакционная коллегия:
Арман Егиазарян (редактор, д.и.н., доц.), **Арам Симонян** (директор Института Арменоведческих исследований ЕГУ, членкор. АН РА, д.и.н., проф.), **Ашот Мелконян** (академик АН РА, д.и.н., проф.), **Артак Мовсисян** (д.и.н., проф.), **Альберт Степанян** (д.и.н., проф.), **Айк Аветисян** (д.и.н., проф.), **Айрапет Маргарян** (д.и.н., проф.), **Левон Чугасзян** (докт. искусствовед. наук, проф.), **Гамлет Петросян** (д.и.н., проф.), **Игит Гарибян** (д.и.н., проф.), **Генрих Абраамян** (д.и.н., проф.), **Айказ Оганесян** (д.и.н., проф.), **Ашот Нерсесян** (д.и.н., проф.), **Ашот Айруни** (д.и.н., проф.), **Валерий Тунян** (д.и.н., проф.), **Ваник Вирабян** (д.и.н., проф.), **Рафик Наапетян** (д.и.н., проф.), **Акоб Арутюнян** (д.и.н., доц.), **Овик Григорян** (к.и.н., доц.), **Мхитар Габриелян** (к.и.н., доц.), **Эдгар Оганнисян** (к.и.н., доц.).

Editor-in-Chief - Doctor of Sciences, prof. **Edik Minasyan**
Editorial Board:
Arman Yeghiazaryan (editor, Doctor of Sciences, associate prof.), **Aram Simonyan** (Director of YSU Institute for Armenian Studies, Corresp. member of NAS RA, Doctor of Sciences, prof.), **Ashot Melkonyan** (Academician of NAS RA, Doctor of Sciences, prof.), **Artak Movsisyan** (Doctor of Sciences, prof.), **Albert Stepanyan** (Doctor of Sciences, prof.), **Hayk Avetisyan** (Doctor of Sciences, prof.), **Hairapet Margaryan** (Doctor of Sciences, prof.), **Levon Chugaszyan** (Doctor of Arts, prof.), **Hamlet Petrosyan** (Doctor of Sciences, prof.), **Igit Gharibyan** (Doctor of Sciences, prof.), **Henrik Abrahamyan** (Doctor of Sciences, prof.), **Haikaz Hovhannisyan** (Doctor of Sciences, prof.), **Ashot Nersisyan** (Doctor of Sciences, prof.), **Asot Hayruni** (Doctor of Sciences, prof.), **Valeri Tunyan** (Doctor of Sciences, prof.), **Vanik Virabyan** (Doctor of Sciences, prof.), **Rafik Nahapetyan** (Doctor of Sciences, prof.), **Hakob Harutunyan** (Doctor of Sciences), **Hovik Grigoryan** (PhD of History, associate prof.), **Mkhitar Gabrielyan** (PhD of History, associate prof.), **Edgar Hovhannisyan** (PhD of History, associate prof.).

ISSN 1829-2771

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ
СОДЕРЖАНИЕ / CONTENT

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ / ИСТОРИЯ / HISTORY

Էդիկ Մինասյան – ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ՆԵՐԴՐՈՒՄԸ ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՄԵԾ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՀԱՂԹԱՆԱԿԻ ԳՈՐԾՈՒՄ (1941-1945 ԹԹ.) 8

***Эдик Минасян** – ВКЛАД АРМЯНСКОГО НАРОДА В ПОБЕДУ В ВЕЛИКОЙ ОТЕЧЕСТВЕННОЙ ВОЙНЕ (1941-1945 ГГ.).* 32

***Edik Minasyan** – THE CONTRIBUTION OF THE ARMENIAN PEOPLE TO THE VICTORY IN THE WORLD WAR II (1941-1945).* 33

Արտակ Մովսիսյան – ՀԱՅ ԷԹՆՈՍԻ ՏԱՐԱԾՄԱՆ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ՄԵՐ ԹՎԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՍԿԶԲԻՆ (ԸՍՏ ՍՏՐԱԲՈՆԻ ՎԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ) 34

***Артак Мовсисян** – ГЕОГРАФИЯ РАСПРОСТРАНЕНИЯ АРМЯНСКОГО ЭТНОСА НАКАНУНЕ НАШЕЙ ЭРЫ (ПО СВЕДЕНИЯМ СТРАБОНА)* 40

***Artak Movsisyan** – THE GEOGRAPHY OF THE SPREAD OF THE ARMENIAN ETHNOS ON THE EVE OF OUR ERA (ACCORDING TO STRABO)* 40

Միքայել Մալխասյան – ՄԵԾ ՀԱՅՔԻ ԱՐԵՎՄՏՅԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ ԸՍՏ ԿԼԱՎԴԻՈՍ ՊՏՂՈՄԵՈՍԻ «ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅԱՆ» 41

***Микаэл Малхасян** – ЗАПАДНЫЕ ГРАНИЦЫ ВЕЛИКОЙ АРМЕНИИ ПО "ГЕОГРАФИИ" КЛАВДИЯ ПТОЛЕМЕЯ.* 47

***Mikayel Malkhasyan** – THE WESTERN BORDERS OF GREATER ARMENIA IN CLAUDIUS PTOLEMY'S "GEOGRAPHY".* 47

Էդգար Վարշամյան – ՀԱՅԱՍՏԱՆԸ ՀՌՈՄԵԱ-ՊԱՐՍԿԱԿԱՆ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅԱՆ ԾԻՐՈՒՄ. ԱՐՇԱԿ Բ-Ի ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ 49

***Эдгар Варшамян** – АРМЕНИЯ В РАЗГАР РИМСКО-ПЕРСИДСКОГО КОНФЛИКТА: ВНЕШНЯЯ ПОЛИТИКА АРШАКА II.* 60

***Edgar Varshamyan** – ARMENIA IN THE MIDST OF THE ROMAN-PERSIAN CONFLICT: THE FOREIGN POLICY OF ARSHAK II.* 61

Արգիշտի Վարդանյան – ՄԱՆՎԵԼ ՄԱՄԻԿՈՆՅԱՆԸ ՄԵԾ ՀԱՅՔԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԽՆԱՄԱԿԱԼ ԵՎ ԿԱՌԱՎԱՐԻՉ 62

***Аргишти Варданян** – МАНВЕЛ МАМИКОНЯН – РЕГЕНТ И УПРАВЛЯЮЩИЙ ЦАРСТВОМ ВЕЛИКОЙ АРМЕНИИ.* 68

***Argishti Vardanyan** – MANVEL MAMIKONYAN – REGENT AND RULER OF THE KINGDOM OF GREATER ARMENIA.* 68

Արման Եղիազարյան – ԲԱԳՐԱՏՈՒՆԻՆԵՐԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՊԱՌԱԿՏՄԱՆ ՊԱՏՃԱՌ ԴԱՐՁԱԾ ՄԻ ԴԱՎԱԴՐՈՒԹՅԱՆ ՇՈՒՐՋ 70

***Арман Егиазарян** – О ЗАГОВОРЕ, ПРИВЕДШЕМ К РАСКОЛУ БАГРАТИДСКОГО ЦАРСТВА.* 79

***Arman Yeghiazaryan** – ON A CONSPIRACY THAT CAUSED THE SPLIT OF THE BAGRATUNIES KINGDOM.* 79

Արարատ Ստեփանյան – ՓԻԼԱՐՏՈՍ ՎԱՐԱԺՆՈՒՆՈՒ ՊԱՏՎԱՏԻՏՂՈՍՆԵՐԸ 81

***Арарат Степанян** – ПОЧЕТНЫЕ ТИТУЛЫ ФИЛАРЕТА ВАРАЖНУНИ.* 86

***Ararat Stepanyan** – THE HONORARY TITLES OF PHILARETOS BRACHAMIOS.* 86

Սեյրան Զաքարյան – ԱԶԳԻ ԲՆՈՒԹԱԳՐՄԱՆ ՀԱՐՑԸ ՀԱՅՈՑ ԻՆՔՆՈՒԹՅԱՆ ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ՀԱՐԱՑՈՒՅՑՈՒՄ (ԳՐԻԳՈՐ ՏԱԹԵՎԱՑԻ ԵՎ ՂԱԶԱՐ ՋԱՀԿԵՑԻ).....88

***Сейран Закарян** – ПРОБЛЕМА ХАРАКТЕРИСТИКИ НАЦИИ В ХРИСТИАНСКОЙ ПАРАДИГМЕ АРМЯНСКОЙ ИДЕНТИЧНОСТИ (ГРИГОР ТАТЕВАЦИ И ГАЗАР ДЖАХКЕЦИ).*.....97

***Seyran Zakaryan** – THE PROBLEM OF CHARACTERIZATION NATION IN THE CHRISTIAN PARADIGM OF ARMENIAN IDENTITY (GRIGOR TATEVATSI AND GHAZAR JAHKETSI).*.....98

Սարգիս Բալդարյան – ԿՈՍՏԱՆԴ ՋՈՒՂԱՅԵՑՈՒ ՎԱՃԱՌԱԿԱՆԱԿԱՆ ՁԵՌՆԱՐԿ-ՆԵՐԻ ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅՈՒՆԸ ՆՈՐ ՋՈՒՂԱՅԻ ԱՌԵՎՏՐԱԿԱՆ ՑԱՆՑՈՒՄ.....99

***Саркис Балдарян** – ЦИРКУЛЯЦИЯ КОММЕРЧЕСКИХ УЧЕБНИКОВ КОНСТАНТА ДЖУГАЕЦИ В ТОРГОВОЙ СЕТИ НОВОЙ ДЖУЛЬФЫ.*..... 106

***Sargis Baldaryan** – THE CIRCULATION OF COMMERCIAL HANDBOOKS OF CONSTANT OF JULFA IN THE TRADE NETWORK OF NEW JULFA.* 106

Արարատ Հակոբյան – 1920 Թ. ԹՈՒՐՔ-ՀԱՅԿԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՍԿՍՄԱՆ ՕՐՎԱ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ (ՊԱՏԵՐԱԶՄԻ 100-ԱՄՅԱԿԻ ԱՌԻԹՈՎ)..... 108

***Арарат Акопян** – К ВОПРОСУ О ДАТЕ НАЧАЛА ТУРЕЦКО-АРМЯНСКОЙ ВОЙНЫ 1920 Г. (К 100-ЛЕТИЮ ВОЙНЫ).*..... 117

***Ararat Hakobyan** – ABOUT THE DATE OF THE BEGINNING OF THE TURKISH-ARMENIAN WAR IN 1920 (TO THE 100TH ANNIVERSARY OF THE WAR).*..... 117

Նելլի Մինասյան – 1920 ԹՎԱԿԱՆԻ ԹՈՒՐՔ-ՀԱՅԿԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ ԵՎ ՀԱՄԱ-ԹՅՈՒՐՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ..... 118

***Нелли Минасян** – ТУРЕЦКО-АРМЯНСКАЯ ВОЙНА 1920 ГОДА И ПЛАНЫ ПАН-ТЮРКИЗМА.* 123

***Nelli Minasyan** – THE TURKISH-ARMENIAN WAR OF 1920 AND THE PROGRAMS OF PAN-TURKİSM.*..... 123

Սուրեն Ավետիսյան – ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԱՐՄԻՐ ԽԱՉԻ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒ-ԹՅՈՒՆԸ ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՄԵԾ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՏԱՐԻՆԵՐԻՆ..... 124

***Сурен Аветисян** – ДЕЯТЕЛЬНОСТЬ ОБЩЕСТВА КРАСНОГО КРЕСТА АРМЕНИИ В ГОДЫ ВЕЛИКОЙ ОТЕЧЕСТВЕННОЙ ВОЙНЫ.* 131

***Suren Avetisyan** – THE ACTIVITY OF RED CROSS SOCIETY OF ARMENIA IN THE YEARS OF THE GREAT PATRIOTIC WAR.* 131

Առնակ Սարգսյան – ԸՆՏՐԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԺՈՂՈ-ՎՐԴԱՎԱՐԱՑՄԱՆ ԻՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ (ՀՀ 2018 Թ. ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՐԻ-ՆԱԿՈՎ)..... 132

***Арнак Саргсян** – УЧАСТИЕ В ИЗБИРАТЕЛЬНОМ ПРОЦЕССЕ В РЕАЛИЯХ ДЕМО-КРАТИЗАЦИИ (НА ПРИМЕРЕ ВЫБОРОВ В РЕСПУБЛИКЕ АРМЕНИИ В 2018 Г.).* 139

***Arnak Sargsyan** – PARTICIPATION IN THE ELECTORAL PROCESS IN THE REALITIES OF DEMOCRATIZATION (ON THE EXAMPLE OF THE REPUBLIC OF ARMENIA IN 2018 ELECTIONS).*..... 139

Գայանե Թովմասյան, **Ռուբիկ Թովմասյան** – ՁԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՅՈՒՐԸՆ-ԿԱԼՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱՊԱԳԱՅԻ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ (ԱՇԽԱՐՀ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆ)..... 140

***Гаяне Товмасян**, **Рубик Товмасян** – БУДУЩИЕ ТЕНДЕНЦИИ РАЗВИТИЯ ТУРИЗМА И ИНДУСТРИИ ГОСТЕПРИИМСТВА В МИРЕ И В АРМЕНИИ.*..... 149

Gayane Tovmasyan*, *Rubik Tovmasyan *– FUTURE TRENDS OF TOURISM AND HOSPITALITY INDUSTRY DEVELOPMENT IN THE WORLD AND IN ARMENIA.* 149

Արշալույս Տետեյան – ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՃԱՆԱՉՄԱՆ ՀԱՐՑԸ ԵՎ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ ԲԱՆԱՁԵՎԵՐՈՒՄ 150

Аршалуйс Тетеян *– ВОПРОС ПРИЗНАНИЯ ГЕНОЦИДА АРМЯН И ПРОБЛЕМА НАГОРНОГО КАРАБАХА В РЕЗОЛЮЦИЯХ ЕВРОПЕЙСКОГО ПАРЛАМЕНТА.* 156

Arshaluys Teteyan *– RECOGNITION OF ARMENIAN GENOCIDE AND NAGORNO-KARABAKH PROBLEM IN THE RESOLUTIONS OF EUROPEAN PARLIAMENT.* 156

ՀՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱԶԳԱԳՐՈՒԹՅՈՒՆ / АРХЕОЛОГИЯ И ЭТНОГРАФИЯ / ARCHAEOLOGY AND ETHNOGRAPHY

Ռաֆիկ Նահապետյան – ՀԱՅԿԱԿԱՆ ԼԵՌՆԱՇԽԱՐՀԸ՝ ԱՆԱՍՆԱՊԱՀԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՀՆԱԳՈՒՅՆ ԿԵՆՏՐՈՆ (ԸՍՏ ՀՆԱԳԻՏԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐԻ ԵՎ ԱՆՏԻԿ ԳՐԱՎՈՐ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ) 157

Рафик Наапетян *– АРМЯНСКОЕ НАГОРЬЕ - ДРЕВНЕЙШИЙ ЦЕНТР СКОТОВОДЧЕСКОЙ КУЛЬТУРЫ (ПО АРХЕОЛОГИЧЕСКИМ МАТЕРИАЛАМ И АНТИЧНЫМ ПИСЬМЕННЫМ ИСТОЧНИКАМ).* 162

Rafik Nahapetyan *– ARMENIAN HIGHLAND - THE MOST ANCIENT CENTRE OF CATTLE BREEDING CULTURE (ACCORDING TO ARCHAEOLOGICAL MATERIALS AND ANCIENT WRITTEN SOURCES).* 162

Քրիստինա Այվազյան – ԲԱՐԵԳՈՐԾՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՀԵՔԻԱԹՆԵՐՈՒՄ 163

Кристина Айвазян *– БЛАГОТВОРИТЕЛЬНОСТЬ В АРМЯНСКИХ НАРОДНЫХ СКАЗКАХ.* 174

Christina Ayvazyan *– CHARITY IN THE ARMENIAN FAIRY TALES.* 175

ԱՐՎԵՍՏ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹ / ИСКУССТВО И КУЛЬТУРА / ART AND CULTURE

Գեղամ Ասատրյան, **Ավետիս Գրիգորյան** – ՄԱՔՐԱՎԱՆՔԻ ԽԱՉՔԱՐԵՐԸ (XII-XIV ԴԴ.) 176

Гегам Асатрян*, *Аветис Григорян *– ХАЧКАРЫ МАКРАВАНКА (XII-XIV ВВ.).* 181

Gegham Asatryan*, *Avetis Grigoryan *– THE CROSSTONES OF MAKRAVANK (XII-XIV CENTURIES).* 181

Մոնթե Մաթևոսյան – ՋՐԱՌԱՏԻ Ս. ԿԱՐԱՊԵՏ ԵԿԵՂԵՑՈՒ ԽԱՉՔԱՐԵՐԸ 185

Монте Матевосян *– ХАЧКАРЫ ЦЕРКВИ СВЯТОГО КАРАПЕТА В ДЖРАРАТЕ.* 188

Monte Matevosyan *– THE KHACHKARS OF JRARAT ST. KARAPET CHURCH.* 188

Շուշանիկ Համբարյան – ԵՐՈՒՍԱՂԵՄԻ Հ[մր] 1970 ԱՎԵՏԱՐԱՆԸ ԵՎ ՄԱՆՐԱՆԿԱՐՆԵՐԻ ՈՒՇ ՇՐՋԱՆԻՆ ԲՆՈՐՈՇ ՊԱՏԿԵՐԱԳՐԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 191

Шушаник Амбарян *– РУКОПИСЬ № 1970 ЕВАНГЕЛИЯ ИЕРУСАЛИМА И ИКОНОГРАФИЧЕСКИЕ ОСОБЕННОСТИ МИНИАТЮР, ХАРАКТЕРНЫЕ ДЛЯ ПОЗДНЕГО ПЕРИОДА.* 199

Shushanik Hambaryan *– № 1970 GOSPEL OF JERUSALEM AND THE ICONOGRAPHIC FEATURES OF THE MINIATURES CHARACTERISTIC OF THE LATE-PERIOD.* 199

ՍՓՅՈՒՌՔԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ / ДИАСПОРАВЕДЕНИЕ / DIASPORA STUDIES

Հրաձին Վարդանյան – ՍՓՅՈՒՌՔԻ ՏԻՊԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԱՅ ՍՓՅՈՒՌՔԸ..... 202
Грацин Варданян *– ТИПОЛОГИЯ ДИАСПОРЫ И АРМЯНСКАЯ ДИАСПОРА.* 207
Hratsin Vardanyan *– TYPOLOGY OF DIASPORAS AND THE ARMENIAN DIASPORA.* 208

Ալիկ Ղարիբյան, **Գայանե Գալստյան** – ՀՅԴ-Ի ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՆԱՎՈՐՈՒՄԸ ԱՄՆ-ՈՒՄ 209
Алик Гарибян, ***Гаяне Галстян*** *– НАЧАЛО ДЕЯТЕЛЬНОСТИ АРФ ДАШНАКЦУТЮН В США.* 214
Alik Gharibyan, ***Gayane Galstyan*** *– THE BEGINNING OF ARF DASHNAKTSUTYUN ACTIVITY IN THE USA.* 215

Էդգար Հովհաննիսյան – ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹՅԱՆ ԿԻՐԱԿՆՈՐՅԱ ԴՊՐՈՑՆԵՐԻ ՀԻՄՆՈՒՄԸ ԵՎ ՆՐԱՆՑ ԴԵՐԸ ՀԱՅԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՄ 216
Эдгар Ованесян *– СОЗДАНИЕ ВОСКРЕСНЫХ ШКОЛ КИЛИКИЙСКОГО КАТОЛИКОСАТА И ИХ РОЛЬ В СОХРАНЕНИИ АРМЯНСКОЙ ИДЕНТИЧНОСТИ.* 225
Edgar Hovhannisyan *– THE FOUNDATION OF SUNDAY SCHOOLS OF THE CATHOLICOSATE OF THE GREAT HOUSE OF CILICIA AND THEIR ROLE IN PRESERVATION OF THE ARMENIAN IDENTITY.* 225

Մարիամ Հակոբյան – ՀԱՅԱՍՏԱՆՅԱՑ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՒ ՀՈՒՆԱՀԱՅՈՑ ԹԵՄԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ ԵՎ ՆՐԱՆՑ ՎԱՐՉԱԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐԸ 1920-1930-ԱԿԱՆ ԹԹ. 226
Мариам Акопян *– ФОРМИРОВАНИЕ ЕПАРХИЙ АРМЯНСКОЙ АПОСТОЛЬСКОЙ ЦЕРКВИ В ГРЕЦИИ И ИХ АДМИНИСТРАТИВНО-ДЕМОГРАФИЧЕСКОЕ ОПИСАНИЕ В 1920-1930-Х ГГ.* 231
Mariam Hakobyan *– THE FORMATION OF THE GREEK-ARMENIAN DIOCESES OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH AND THEIR ADMINISTRATIVE-DEMOGRAPHIC DESCRIPTION IN THE 1920s AND 1930s.* 231

Նարինե Նուշերվանյան – «ՍՓՅՈՒՌՔ-ՀՅՈՒՐԸՆԿԱԼՈՂ ԵՐԿԻՐ-ՀԱՅՐԵՆԻՔ» ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՌԱՆԿՅՈՒՆԱՁԵՎ ՄՈԴԵԼԸ 232
Нарине Нушерванян *– ТРЕХСТОРОНЯЯ МОДЕЛЬ ВЗАИМООТНОШЕНИЙ "ДИАСПОРА-ПРИНИМАЮЩАЯ СТРАНА-РОДИНА".* 240
Narine Nushervanyan *– "DIASPORA-HOST COUNTRY-HOMELAND" TRIANGULAR MODEL OF RELATIONS.* 241

Գևորգ Ղուկասյան – ԱՐԵՎՄՏՅԱՆ ԵՎՐՈՊԱՅԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՓՅՈՒՌՔԻ ԼՈԲԲԻՍՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՇՈՒՐՋ 242
Геворг Гукасян *– О ЛОББИСТСКОЙ ДЕЯТЕЛЬНОСТИ АРМЯНСКОЙ ДИАСПОРЫ В ЗАПАДНОЙ ЕВРОПЕ.* 250
Gevorg Ghukasyan *– ON THE LOBBYING ACTIVITIES OF THE ARMENIAN DIASPORA IN WESTERN EUROPE.* 251

ԱՂԲՅՈՒՐԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ / ИСТОЧНИКОВЕДЕНИЕ / SOURCE STUDIES

Հայկազ Հովհաննիսյան, **Կարեն Բայրամյան** – ՆՈՐԱՀԱՅՏ ՎԱՎԵՐԱԳՐԵՐ ԼԱՉԱՐՅԱՆՆԵՐԻ ԱՐԽԻՎԻՑ 252

Айказ Оганесян, Карен Байрамян *– НОВОВЫЯВЛЕННЫЕ ДОКУМЕНТЫ ИЗ АРХИВА ЛАЗАРЕВЫХ.* 261

Haikaz Hovhannisyan, Karen Bayramyan *– NEWLY REVEALED DOCUMENTS FROM THE LAZAREVS ARCHIVE.* 261

Հովիկ Գրիգորյան, Հայկ Մխոյան – ԴԱՎԻԹ ԱՆԱՆՈՒՆԻ ԵՎ ԼԵՈՅԻ ՆԱՄԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆԻՑ 262

Овик Григорян, Айк Мхоян *– ИЗ ПЕРЕПИСКИ ДАВИТА АНАНУНА И ЛЕО.* 273

Hovik Grigoryan, Haik Mkhoyan *– FROM THE LETTERS OF DAVID ANANUN AND LEO.* 274

ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈԴԱԿԱՆ / УЧЕБНО-МЕТОДИЧЕСКИЙ / EDUCATIONAL-METHODOLOGICAL

Արա Հովհաննիսյան – ՀԱՅԿԱԿԱՆ ՍՓՅՈՒՌՔԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԴԱՍԱՎԱՆԴՈՒՄԸ (ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ՄԵԹՈԴԱԿԱՆ ՈՒՂԵՆԻՇՆԵՐ) 275

Ара Оганесян *– УЧЕБНО-МЕТОДИЧЕСКИЕ ПРИНЦИПЫ И ОСОБЕННОСТИ КУРСА “ИСТОРИЯ АРМЯНСКОЙ ДИАСПОРЫ”.* 281

Ara Hovhannisyan *– EDUCATIONAL AND METHODOLOGICAL PRINCIPLES AND FEATURES OF THE COURSE “HISTORY OF ARMENIAN DIASPORA”.* 282

ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ / РЕЦЕНЗИЯ / REVIEW

Կարինե Եղիազարյան, Մերի Հովհաննիսյան. ЭДИК МИНАСЯН – ГЕРОИЧЕСКАЯ ДЕЯТЕЛЬНОСТЬ АРМЯНОК В ГОДЫ ОСВОБОДИТЕЛЬНОГО ДВИЖЕНИЯ КОНЦА XIX–НАЧАЛА XX ВЕКА, МОСКВА, «ЭДИТУС», 2020, 252 С 283

Էդիկ Մինասյան, Էդիկ Զոհրաբյան. ՀԵՆՐԻԿ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ – ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆԿԱԽԱՑՄԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ՆԱԽԱԴՐՅԱԼՆԵՐԸ ԵՎ ԿԱՅԱՑՄԱՆ ՍԿԻԶԲԸ (1956 Թ. ՓԵՏՐՎԱՐ – 1991 Թ. ՍԵՊՏԵՄԲԵՐ), Ե., ԵՊՀ ՀՐԱՏ., 2019, 398 ԷՋ 286

Վալերի Թունյան, Արա Հովհաննիսյան. «ԴՈՆԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԸ ՆՈՐԱԳՈՒՅՆ ՇՐՋԱՆՈՒՄ. ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ, ԻՆՍՏԻՏՈՒՏՆԵՐ, ԻՆՔՆՈՒԹՅՈՒՆ», ԳԻՏԱԿԱՆ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ /ԿԱԶՄՈՂ Է. ՄԻՆԱՍՅԱՆ/, Ե., ԵՊՀ ՀՐԱՏ., 2020, 212 ԷՋ 288

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ 290

INFORMATION ABOUT THE AUTHORS 292

Ի ԳԻՏՈՒԹՅՈՒՆ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ 294

NOTICE FOR THE AUTHORS 294

Նելլի Մինասյան

1920 ԹՎԱԿԱՆԻ ԹՈՒՐՔ-ՀԱՅԿԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ ԵՎ ՀԱՄԱԹՅՈՒՐՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ

Հիմնաբառեր. *Հայաստանի Հանրապետություն, համաթյուրքականություն, թուրք-հայկական պատերազմ, Մուսթաֆա Քեմալ, ազգայնամոլական շարժում:*

Միություն և առաջադիմություն կուսակցությունը Բալկանյան պատերազմներում պարտություն կրելուց հետո որդեգրեց համաթյուրքականության գաղափարախոսությունը, որը դրվեց Օսմանյան կայսրության ներքին ու արտաքին քաղաքականության հիմքում: Երիտթուրքական ղեկավարության նպատակն էր պահպանել կայսրությունը, որն արդեն կորցրել էր եվրոպական գրեթե բոլոր տարածքները: Մյուս կողմից երիտթուրքերը ձգտում էին ձեռք բերել նոր տարածքներ: Համաթյուրքականության գաղափարախոսությունը և ծրագրերն ամբողջությամբ համընկնում էին երիտթուրքերի նպատակների հետ: Այստեղ ներկայացվում էր թյուրքական աշխարհը, այսինքն՝ թյուրքական ժողովուրդներին, որոնք հիմնականում գտնվում էին Ռուսական կայսրության կազմում և համաթյուրքականության տեսլականն էր այս բոլոր ժողովուրդներին միավորել մեկ պետության սահմաններում՝ Օսմանյան կայսրության գլխավորությամբ, և ստեղծել Մեծ Թուրան պետությունը:

Համաթյուրքականության ծրագիրը ներկայացված է այդ գաղափարախոսության հիմնադիրներից Զիյա Գյոքալփի «Թյուրքականության հիմունքները» հայտնի աշխատությունում: Հեղինակն առանձնացնում է համաթյուրքականության երեք աստիճան՝ թյուրքականություն, օղուզականություն կամ թուրքմենականություն և թուրանականություն[1]: Թյուրքականությունը վերաբերվում էր կայսրության ներքին քաղաքականությանը, այսինքն՝ նշանակում էր թուրքացնել Թուրքիան, որը սկսեցին երիտթուրքերը և ավարտին հասցրեցին քեմալականները: Գյոքալփի խոսքերով. «...մեր մոտավոր նպատակը լինելու է Օղուզական միության կամ Թուրքմենական միության ստեղծումը»[2]: Իսկ համաթյուրքականության հեռավոր նպատակը Թուրանն է[3]: Ինչպես նշում է պատմաբան Լ. Խուրշուդյանը. «եթե թուրքիզմը իրականացնելու՝ Թուրքիան թուրքացնելու համար ոչնչացվեց արևմտահայությունը, ապա օղուզականության իրականացման համար պետք է ոչնչացվեր նաև արևելահայությունը: Այդ երկրների միավորման համար պետք է ոչնչացվեր հայկական «սեպը»՝ Արևելյան Հայաստանը»[4]: Փաստորեն թուրքերի նպատակն էր գրավել Կովկասը, ապա՝ դուրս գալ Կասպից ծովի ավազան և միավորել թյուրքախոս ժողովուրդներին:

Առաջին համաշխարհային պատերազմի վերջին փուլում թուրքերի՝ դեպի Արևելք ձգտումը և թյուրքական աշխարհի հետ միավորվելը կարծես թե իրականություն էր դառնում, քանի որ թուրքական զորքերին հաջողվել էր մտնել Բաքու դեռևս 1918 թ. սեպտեմբերին: Երիտթուրքերի նպատակն էր միավորվել ադրբեջանական մուսավաթականների հետ[5], որն էլ նշանակում էր համաթյուրքականության ծրագրի առաջին փուլի իրականացումը: Սակայն օսմանյան թուրքերի և կովկասյան թյուրքերի միավորմանը խոչընդոտում էր Հայաստանը:

Նման պայմաններում 1918 թ. հոկտեմբերի 30-ին ստորագրված Մուդրոսի զինադադարով Օսմանյան կայսրությունն իրեն ճանաչում էր պարտված կողմ և դուրս գալիս պատերազմից: Փաստորեն նրա համար պատերազմն ավարտվում էր և կարծես թե տապալվել էին պանթյուրքական ծրագրերը: Սակայն սա միայն առաջին հայացքից, քանզի քեմալականներն այս հարցում

* *Հոդվածը ներկայացվել է 09.11.2019 թ., գրախոսվել՝ 01.06.2020 թ., ընդունվել տպագրության՝ 15.06.2020 թ.:*

[1] *Տե՛ս Gökalp Ziya, Türkçülüğün Esasları, İstanbul, 1968, s. 25.*

[2] *Տե՛ս նույն տեղում, էջ 22:*

[3] *Տե՛ս նույն տեղում, էջ 23:*

[4] *Խուրշուդյան Լ., Հայոց ազգային գաղափարախոսությունը, Ե., 1999, էջ 73:*

[5] *1918 թ. հունիսի 4-ին Օսմանյան կայսրության և Ադրբեջանի միջև ստորագրվեց խաղաղության և բարեկամության համաձայնագիր: Տե՛ս Балаев А., Азербайджанское национально-демократическое движение: 1917-1920 гг., Баку, 1990, с. 30.*

շարունակեցին երիտթուրքերի քաղաքականությունը՝ միաժամանակ համաթյուրքականության գաղափարախոսությունը ենթարկելով որոշակի փոխակերպումների: Զինադադարի կնքումից կարճ ժամանակ անց՝ 1919 թ. մայիսի 19-ից, Օսմանյան կայսրության արևելյան վիլայեթներում, մասնավորապես Արևմտյան Հայաստանի տարածքում սկսվեց ազգայնամոլական շարժում Մուսթաֆա Քեմալի գլխավորությամբ: Նշենք, որ թեև երիտթուրքական կուսակցությունը դադարեց գոյություն ունենալուց, սակայն այնտեղ պատրաստված երիտասարդների խումբը, այսպես կոչված թյուրքչիները կամ թյուրքականության կողմնակիցները լայնորեն սկսեցին շարժում զինվորականության ու մտավորականության շրջանում: Քեմալական շարժման հիմքում կանգնեցին նախկին երիտթուրքերը կամ այդ կուսակցության պատրաստած կադրերը, ինչպես նաև քեմալականների կողմից օգտագործվեցին երիտթուրքերի գաղափարներն ու ծրագրերը[1]:

Համաթյուրքականության ծրագրի առաջին փուլը ենթադրում էր միավորում Կովկասի մուսուլմանների հետ: Այս դեպքում խոսքը վերաբերվում էր Ադրբեջանին, որն իր ստեղծման մասին հայտարարել էր 1918 թ. մայիսի 27-ին: Այս հարցում քեմալականները շարունակեցին երիտթուրքերի քաղաքականությունը: Նշենք, որ թուրքական որոշ զորամիավորումներ գտնվում էին ադրբեջանցիների վերահսկողության տակ գտնվող բնակավայրերում կամ շրջակա տարածքներում դեռևս 1918 թ., իսկ թուրք զինվորականներից Նուրի փաշան ակտիվ գործունեություն էր ծավալում[2]: Ինչպես նշում է հայ հետազոտող Զարևանդը. «Միլլիական շարժումը, անկասկած, թուրքերու ըմբոստացումն էր դաշնակիցներու բոլոր ծրագիրներուն դեմ, բայց այն ուղղված էր, մասնավորապես, կազմությանը դեմ Հայաստանի՝ որ միանգամընդմիշտ պիտի բարձրանար Թուրքիո և թրքական բնաշխարհին միջև»[3]: Ասվածի ապացույցն է այն, որ քեմալականները սկսեցին քայլեր ձեռնարկել մուսավաթականների հետ հարաբերություններ հաստատելու ուղղությամբ: Քեմալը Էրզրումի համաժողովից (1919 թ. հուլիսի 23-օգոստոսի 7)[4] հետո պատվիրակություն ուղարկեց Այսրկովկաս, որի նպատակն էր սերտացնել հարաբերություններն ադրբեջանցիների հետ և հակահայկական գործողությունների արդյունքում տեղի մուսուլման բնակչությանը հանել հայերի դեմ: Այս հարցը ներկայացվել և քննարկվել է նաև քեմալականների երկրորդ կոնգրեսի ժամանակ, որը տեղի է ունեցել Սեբաստիայում (Սվազում) 1919 թ. սեպտեմբերի 4-12-ը: Հիմք է դրվում թուրք-ադրբեջանական գաղտնի դաշինքին, որը կնքվում է 1919 թ. նոյեմբերի 29-ին Կ. Պոլսում[5]: Դաշնագիրը ենթադրում էր որ կողմերը՝ պետք է օգնեն միմյանց հողային ամբողջականությունը պահպանելու համար, Ադրբեջանը չպետք է դաշինք կամ համաձայնություն կնքեր այլ պետության հետ առանց Թուրքիայի համաձայնության, թուրք սպաները պետք է մարզեին (ադրբեջանական-Ն. Մ.) բանակը[6]: Քեմալա-մուսավաթական համաձայնությունն ավելի կոնկրետ բովանդակություն ստացավ 1920 թ. ապրիլի 15-ին Էրզրումում Քյազիմ Քարաբեքիր փաշայի և մուսավաթական կառավարության զինվորական նախարարի օգնական Աղա օղլու Շիխլինսկու միջև

---

[1] *Տե՛ս Մելքոնյան Ռ., Երիտթուրքեր-քեմալականներ. գաղափարական և կադրային շարունակություն, «Արևելագիտության հարցեր», № 14, Երևան, 2018, էջ 152-165:*

[2] *Տե՛ս Minasyan N., The Turkish-Azerbaijani Pan-Turkism Programs and Artsakh in 1917-1920, International Review of Armenian Studies, N 2 (17), p. 34-35.*

[3] *Զարևանդ, Միացյալ անկախ Թուրանիա, Ե., 1993, էջ 113:*

[4] *Քեմալական ազգայնամոլական շարժման և քեմալականների հետագա գործողությունների կազմակերպման համար կարևոր նշանակություն են ունեցել երկու համաժողովներ: Առաջինը տեղի է ունեցել Էրզրումում (Կարին), որին մասնակցում էր 62 պատգամավոր, ինչպես թուրքեր, այնպես էլ քրդեր: Այստեղ Քեմալը ընտրվեց համաժողովի նախագահ, ինչպես նաև նրա գլխավորությամբ ստեղծվեց ներկայացուցչական մարմին՝ այդպիսով հիմք դնելով նոր իշխանության ձևավորման գործընթացին: Հարկ է նշել, որ Էրզրումի, հետագայում՝ Սեբաստիայի համաժողովների արդյունքում ընդունված բանաձևերը խորապես հակահայկական էին, քանզի չէին ճանաչում Հայաստանի Հանրապետության գոյությունը և Օսմանյան կայսրությունից Արևմտյան Հայաստանի անջատման իրավունքը, ավելին Սեբաստիայի համաժողովի ժամանակ ընդունված բանաձևում նշվում էր, որ «մինչև արյան վերջին կաթիլը» պայքարելու են հունական կամ հայկական պետությունների դեմ: Տե՛ս Мустафа Кемаль, Путь новой Турции, том I, М., 1929, с. 63-64, Խուրշուդյան Լ., Հայաստանի բաժանումը 1920 թվականին, Եր., 2017, էջ 9-10:*

[5] *Տե՛ս նույն տեղում, էջ 117:*

[6] *Տե՛ս Զոհրաբյան Է., Սովետական Ռուսաստանը և հայ-թուրքական հարաբերությունները 1920-1922 թթ., Ե., 1979, էջ 27, Զարևանդ, նշվ. աշխ., էջ 117:*

կնքված համաձայնագրում: Այստեղ կողմերը բացահայտ պայմանավորվում են հայերի դեմ համատեղ պայքարի շուրջ[1]: Կարող ենք եզրակացնել, որ կողմերի նպատակն էր ամեն գնով ոչնչացնել Հայաստանը և ուղիղ կապ հաստատել միմյանց հետ: Այս նույն շրջանում քեմալականները հարաբերությունները կարգավորեցին նաև Վրաստանի հետ[2]:

Հայաստանի դեմ քեմալականների որդեգրած քաղաքականության էությունը բացահայտելու համար հարկավոր է անդրադառնալ կարևոր մի փաստաթղթի, որն ուղենշում էր նրանց ներքին ու արտաքին քաղաքականությունը և լիովին համապատասխանում էր այդ շարժման գաղափարական ու քաղաքական դրույթներին: Սեբաստիայի կոնգրեսի ժամանակ վերջնական տեսքի բերվեց ազգային ծրագիրը, որը ձևակերպվեց «Ազգային ուխտ»-ում, որտեղ կարևոր խնդիր էր հանդիսանում «ազգային սահմաններին» վերաբերող կետը[3]: Ժամանակակից Թուրքիայում այն բնութագրվում է որպես քեմալական շարժման բուն նպատակներն արտահայտող ծրագիր[4]: Թուրքական խորհրդարանը «Ազգային ուխտը» ընդունեց 1920 թ. փետրվարի 17-ին[5]: Հայաստանի համար կարևոր էր 2-րդ կետը, այսինքն Թուրքիայի սահմանների մեջ նախատեսվում էր ներառել Արևմտյան Հայաստանից բացի Կարսի, Արդահանի ու Բաթումի լիվաները (կամ սանջաք՝ վարչական միավոր – Ն.Մ.)[6]: «Ազգային ուխտ»-ի նախաձեռնողն ու հեղինակը Մ. Քեմալն էր, իսկ խորհրդարանն այս փաստաթուղթն ընդունեց քեմալականների ազդեցության ներքո[7]: «Ազգային ուխտ» կոչված փաստաթուղթը աչքի էր ընկնում իր ազգայնամոլական բնույթով և հարուցեց դաշնակիցների, մասնավորապես անգլիացիների դժգոհությունը, սակայն այն առաջին հերթին նախատեսում էր Թուրքիայի դիրքերն ամրապնդել Արևելքում՝ այն է պատերազմ սկսել Հայաստանի դեմ: Բացի այդ, Սեբաստիայի կոնգրեսում թուրք ազգայնականները նորից հաստատեցին «Հայաստանին ոչ մի թիզ հող չզիջելու» և ազգային փոքրամասնությունների ինքնուրույն գոյության իրավունքը չճանաչելու իրենց «անհողդողդ» կամքը[8]: Փաստորեն, այս հարցում քեմալականները երիտթուրքական ազգայնական քաղաքականության շարունակողներն էին, որի նպատակն էր Թուրքիան ամբողջությամբ թուրքացնել: Այս նպատակին էր ծառայում համաթյուրքականության գաղափարախոսությունը, որի հիմնական դրույթները դրված էին նաև թուրքական ազգայնականության հիմքում:

Հայաստանի դեմ պատերազմ սկսելու անհրաժեշտության վերաբերյալ Մ. Քեմալը իր եզրահանգումը հայտնում է 1920 թ. փետրվարի 5-ին, «Ազգային ուխտ»-ի գաղտնի ընդունումից (հունվարի 28-ին) մեկ շաբաթ անց, ինչը նշանակում է, որ նախասկզբնական «գաղափարական» փուլն ավարտված է և կարելի է անցնել բուն պատերազմի նախապատրաստմանը[9]: Միաժամանակ Քեմալը ծածկագրով դիմում է 15-րդ կորպուսի հրամանատար Ք. Քարաբեքիր փաշային և

---

[1] *Տե՛ս Զոհրաբյան Է., նշվ. աշխ., էջ 27:*

[2] *Վրաստանի հետ կապված խնդիրները ևս քննարկվեցին Սեբաստիայի կոնգրեսում, որտեղ քեմալականներն ու մուսավաթականները միասնական կարծիք հայտնեցին Վրաստանի հետ հարաբերություններ հաստատելու ուղղությամբ: Այնուհետև Թիֆլիսում սկսվեցին բանակցություններ, որոնց արդունքում ստորագրվեց թուրք-վրացական չեզոքության դաշինքը: Դաշինքով Վրաստանը պարտավորվում էր թուրք-հայկական պատերազմի դեպքում պահպանել չեզոքություն՝ Բորչալուն, Ախալքալաքն ու Արդահանը ստանալու դիմաց:*

[3] *Տե՛ս Ататюрк Кемаль, Избранные речи и выступления, М., 1966, с. 13.*

[4] *Տե՛ս Sakin Serdar, Milli Mucadelenin Programı: Misak-ı Milli, Atatürk Haftası Armağanı: Genelkurmay ATASE ve Denetleme Başkanlığı Yayınları, 10 Kasım, Sayı 32, 2005, s. 31-48.*

[5] *«Ազգային ուխտը» բաղկացած էր նախաբանից և վեց կետերից: Տե՛ս Milli Egemenlik Belgeleri: Havza Genelgesi, Erzurum Kongresi Beyannamesi, Sivas Kongresi Beyannamesi, Misak-ı Milli Beyannamesi, Ankara, TBMM Basımevi, 2015, s. 37-38.*

[6] *Տե՛ս նույն տեղում, էջ 37:*

[7] *Դաշնակիցները և սուլթանը, նկատելով, որ քեմալականների ազդեցությունը մայրաքաղաքում ուժեղանում է, քայլեր ձեռնարկեցին: 1920 թ. մարտի 16-ին սուլթանի համաձայնությամբ Ստամբուլը պաշտոնապես հայտարարվեց գրավված դաշնակիցների կողմից, ցրվեց խորհրդարանը, իսկ պատգամավորների մի մասը ձերբակալվեց: Քեմալականների կոչով ազատության մեջ մնացած պատգամավորները լքեցին մայրաքաղաքը և հաստատվեցին Անկարայում, որտեղ էլ 1920 թ. ապրիլի 23-ին գումարվեց Թուրքիայի ազգային մեծ ժողովի (ԹԱՄԺ) առաջին նիստը: ԹԱՄԺ-ը հռչակվեց օրենսդիր և գործադիր իշխանության գերագույն մարմին, իսկ Մուսթաֆա Քեմալն ընտրվեց նախագահ:*

[8] *Տե՛ս Զոհրաբյան Է. Ա., նշվ. աշխ., էջ 21:*

[9] *Տե՛ս Սաֆրաստյան Ռ., Մուստաֆա Քեմալ. պայքար Հայաստանի Հանրապետության դեմ (1919-1921 թթ.), Ե., 2019, էջ 64:*

հայտնում, որ Հայաստանի դեմ հարձակման անցնելու նպատակով սկսվի «պաշտոնական կամ ոչ պաշտոնական զորակոչ»[1]: Նշենք, որ հետագայում խորհրդային 11-րդ Կարմիր բանակը հաղթանակներ տանելով Դենիկինի ուժերի դեմ՝ առաջանում է դեպի Այսրկովկաս, իսկ ապրիլի վերջին մտնում է Ադրբեջան և խորհրդայնացնում այն: Նման պայմաններում թուրքերը պետք է վերջնական որոշում կայացնեին՝ սկսե՞լ Հայաստանի Հանրապետության դեմ պատերազմը, թե ոչ: Ըստ էության Մ. Քեմալը, չհրաժարվելով պանթյուրքական ծրագրերից, միաժամանակ գիտակցում էր, որ խորհրդային զորքի՝ դեպի Այսրկովկաս առաջխաղացման պայմաններում այդ ծրագրերը հազիվ թե իրագործվեին, սակայն պատեհ հնարավորությունը չէր ուզում բաց թողնել հայկական տարածքներ գրավելու և Ադրբեջանին մոտենալու համար: Այս առումով Հայաստանը միշտ կմնար որպես պատնեշ, որը թույլ չէր տա միավորվել կողմերին: Տվյալ խնդրի լավագույն ուսումնասիրող, պատմաբան Է. Զոհրաբյանի բնութագրմամբ, եթե ներքին քաղաքականության բնագավառում քեմալականներն իրենց նախորդներից ժառանգել էին ամենածայրահեղ նացիոնալիզմը, ապա արտաքին քաղաքականության մեջ նրանք ժառանգեցին երիտթուրքերի գաղափարախոսության ու քաղաքականության ամենահիմնական գիծը՝ պանթյուրքիզմը[2]: Այս տեսանկյունից էլ դիտարկել ենք Մ. Քեմալի նախաձեռնած թուրք-հայկական պատերազմը:

Վերոնշյալից ակնհայտ է, որ Հայաստանի դեմ նախաձեռնվող պատերազմը Մ. Քեմալը նախատեսել էր դեռևս 1920 թ. առաջին ամիսներից: Ըստ էության նա սպասում էր համապատասխան պահի՝ հիմնականում հաշվի առնելով արտաքին գործոնները: Վերջինիս տակ հասկանում ենք դաշնակիցներին և բոլշևիկներին: 1920 թ. օգոստոսի վերջին և սեպտեմբերի սկզբին իրադրությունն այնպիսին էր, որ Հայաստանի դեմ պատերազմին չէին միջամտի ո՛չ արևմտյան երկրները, ո՛չ էլ բոլշևիկները[3]:

Հայաստանի վրա հարձակվելու հրամանը տրվեց 1920 թ. սեպտեմբերի 20-ին, որը կառավարության անունից ստորագրել է Մուսթաֆա Քեմալը: 1923 թ. սեպտեմբերի 23-ին թուրքական զորքը Ք. Քարաբեքիրի հրամանատարությամբ հարձակվեց Հայաստանի վրա: Մինչ այդ 1920 թ. սեպտեմբերի 14-ին Մուսթաֆա Քեմալի՝ Արևմտյան ճակատի հրամանատար Ալի Ֆուադին ուղղված նամակում ասվում է. «Հայերի հետ հարկավոր է սկսել պատերազմ, որպեսզի Թուրքիային միացվի նաև Ադրբեջանը»[4]: Հարձակման նպատակն էր հռչակվում «հայկական զինված ստորաբաժանումների ոչնչացումը»[5]: Ավելի ուշ, երբ ակնհայտ դարձավ, որ Հայաստանի Հանրապետությունն այլևս անկարող է դիմակայել Ք. Քարաբեքիրի բանակին, վերջինիս առջև դրվեց մի նոր խնդիր. վերացնել «Հայաստանն իրապես և քաղաքականապես»[6]: Քեմալականների, մասնավորապես Մ. Քեմալի՝ թուրք-հայկական պատերազմում հիմնական նպատակն է եղել անմիջական ցամաքային կապ հաստատել Ադրբեջանի հետ, որն էլ իրենից ենթադրում էր տարածաշրջանում Հայաստանի որպես ինքնուրույն գործոնի ոչնչացում, Այսրկովկասում անկախ հայկական պետության գոյության բացառում, հայության արևելյան հատվածի ոչնչացում, ինչպես նաև Արևմտյան Հայաստանի նկատմամբ իրավունքից հայերի զրկում (սա կապված էր 1920 թ. օգոստոսի 10-ին ստորագրված Սևրի պայմանագրի հետ, որը քեմալականները չէին ընդունում):

Հարկ է փաստել, որ քեմալականներին աջակցելու համար Ադրբեջանում ևս ակտիվ գործունեություն էին ծավալում, ինչպես թուրք լրտեսները և նախկին երիտթուրքական ղեկավարներից Էնվերն ու նրան ենթակա ուժերը, այնպես էլ ադրբեջանցիները՝ ի դեմս մուսավաթականների: Այս ամենի մասին Քեմալին տեղյակ է պահում Ադրբեջանի հեղկոմի նախագահ Ն. Նարիմանովը: Վերջինս նշում է 11-րդ բանակի առաջխաղացման մասին դեպի Հայաստան, որը խոչընդոտում է քեմալականների հետ միանալուն և ներկայացնում է, որ ադրբեջանցի թուրք ղեկավարները շտապում են միանալ Քեմալի ուժերին Հայաստանի վրայով[7]:

---

[1] Karabekir Kazım, İstiklal Harbimiz, İstanbul, 1959-1960, s. 466; Սաֆրաստյան Ռ., նշվ. աշխ., էջ 64-65:

[2] Տե՛ս Զոհրաբյան Է., նշվ. աշխ., էջ 30:

[3] Այս շրջանում արդեն քեմալականների և բոլշևիկների միջև փաստացի դաշնակցային հարաբերություններ էին հաստատվել: 1920 թ. սեպտեմբերի 8-ին Կարին (Էրզրում) հասավ Ռուսաստանից ուղարկված 200 կգ ոսկին:

[4] Cebesoy A. F., Milli Mücadele Hatıraları, Istanbul, 1953, s. 134-140.

[5] Սաֆրաստյան Ռ., Մուստաֆա Քեմալ. պայքար Հայաստանի Հանրապետության դեմ, (1919-1921 թթ.), էջ 75:

[6] Նույն տեղում, էջ 55, 88:

[7] Տե՛ս Հայաստանի ազգային արխիվ, ֆոնդ 200, գործ 1, ցուցակ 4, թուղթ 21:

Պատմաբան Հ. Սիմոնյանի խոսքերով, թուրք-հայկական պատերազմում թերևս ամենաողբերգականը համարյա առանց կրակոցի Կարսի անառիկ բերդի հանձնումն էր թշնամուն[1]: Կարսի բերդը թուրքերը գրավեցին 1920 թ. հոկտեմբերի 30-ին: Այս հանգամանքը ինքնավստահություն հաղորդեց թուրքերին և նրանք ավելի համարձակ դարձան իրենց հետագա ծրագրերն իրագործելու առումով: Թուրքերը նոյեմբերի 5-ին գրավեցին Ալեքսանդրապոլը և նրա բերդը[2]: Ք. Քարաբեքիրը հայկական կողմին ներկայացրեց պատերազմը դադարեցնելու պայմանները, որը հայկական պետությանը զրկում էր կենսագործունեության պայմաններից և, ըստ էության, ՀՀ տարածաշրջանում կդադարեր գործոն լինելուց: Համաձայն Թուրքիայի ազգային մեծ ժողովի՝ կառավարության արտաքին գործերի նախարարի պաշտոնակատար Ահմեթ Մուհթարի Քարաբեքիրին նոյեմբերի 8-ին ուղարկված ծածկագրում տեղ գտած հստակ ձևակերպման, «բացարձակ անհրաժեշտություն է, որ Հայաստանը քաղաքականապես ու նյութապես մեջտեղից վերացվի»[3]: Այսինքն՝ քեմալականները ստեղծված բարենպաստ պայմաններում ձգտում էին իրագործել համաթյուրքականության ծրագիրը և վերացնել Հայաստանն ու հայությանը:

Քեմալականների իրական նպատակները պարզելու համար կարևոր նշանակություն ունի Մ. Քեմալի ելույթը ԹԱՄԺ-ի 1920 թ. նոյեմբերի 18-ի փակ նիստում, որտեղ նա, հենվելով Գլխավոր սպայակույտի եզրահանգումների վրա, նշում է, որ Հայաստանի դեմ ռազմական գործողությունները նպատակ ունեին ցամաքային կապ հաստատել Ադրբեջանի հետ[4]: Այս խոսքերը հետագայում Մ. Քեմալի կողմից հերքվում են:

Նման ծանր պայմաններում հայկական կողմը ընդունում է վերջնագրի պայմանները, և 1920 թ. դեկտեմբերի 2-ի լույս 3-ի գիշերը Հայաստանի Հանրապետության և Թուրքիայի միջև Ալեքսանդրապոլում կնքվում է պայմանագիր[5]: Սակայն այս պայմանագիրը կյանքի չկոչվեց, քանզի նույն 1920 թ. դեկտեմբերի 2-ին ՀՀ պատվիրակությունը ստորագրեց հանրապետության խորհրդայնացման պայմանագիրը: Խորհրդային Ռուսաստանի և քեմալական Թուրքիայի միջև առկա խնդիրները լուծելու համար սկսվեցին բանակցություններ, որոնք էլ ավարտվեցին 1921 թ. մարտի 16-ին Մոսկվայի պայմանագրի ստորագրմամբ[6]: Այս պայմանագրի հիման վրա համապատասխանաբար այսրկովկասյան երեք հանրապետությունների՝ Հայկական, Վրացական և Ադրբեջանական ՍՍՀ-ի և քեմալական Թուրքիայի միջև պայմանագիրը ստորագրվեց 1921 թ. հոկտեմբերի 13-ին Կարսում[7]: Այս պայմանագրերով կարգավորվեց կողմերի միջև սահմանային և տարածքային խնդիրները: Կարսի պայմանագրով (5-րդ հոդված) Թուրքիայի, Ադրբեջանի և Հայաստանի կառավարությունները համաձայնվում են, որ Նախիջևանի մարզը կազմում է ինքնավար հանրապետություն Ադրբեջանի հովանավորության ներքո[8]:

Այսպիսով, քեմալականները շարունակեցին երիտթուրքերի համաթյուրքականության ծրագրերը, որի առաջնային նպատակն էր միավորվել կովկասի թաթարների հետ: Մեր կարծիքով Մուսթաֆա Քեմալը ՀՀ-ի դեմ պատերազմ սկսելով փորձում էր իրականացնել համաթյուրքականության ծրագիրը: Քեմալականները թեև չկարողացան հասնել իրենց հիմնական նպատակի իրագործմանը, սակայն ունեցան որոշ կարևոր ձեռքբերումներ, այն է՝ յուրացրեցին Կարսի մարզը և Սուրմալուի գավառը, իսկ Նախիջևանը, հետագայում նաև Լեռնային Ղարաբաղը, տրվեցին Ադրբեջանին: Մյուս կողմից, տարածաշրջանի խորհրդայնացմամբ Թուրքիան ստիպված պաշտոնապես հրաժարվեց համաթյուրքականության ծրագրից, սակայն սկսվեց վերջինի

---

[1] *Տե՛ս Սիմոնյան Հ., Թուրք-հայկական հարաբերությունների պատմությունից, Եր., 1991, էջ 401:*

[2] *Տե՛ս նույն տեղում, էջ 402:*

[3] *Kazım Karabekir, նշվ. աշխ., էջ 901:*

[4] *Տե՛ս Սաֆրաստյան Ռ., Թուրք-հայկական պատերազմի շրջանի թուրքական վավերագրեր (1920 թ. նոյեմբեր), Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, հ. XXV, Եր., 2006, էջ 413:*

[5] *Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում, (1828-1923), խմբ. Զ. Ս. Կիրակոսյանի, Եր., 1972, էջ 683-687:*

[6] *Պայմանագրի տեքստը տե՛ս Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում, (1828-1923), էջ 499-507:*

[7] *Պայմանագրի տեքստը տե՛ս Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում, (1828-1923), էջ 517-527:*

[8] *Տե՛ս Զոհրաբյան Է., նշվ. աշխ., էջ 296:*

գաղտնի զարգացման ու կերպափոխությունների փուլը, որի դրսևորումները ակնհայտ են դառնում հետագա տասնամյակներին:

Нелли Минасян, ТУРЕЦКО-АРМЯНСКАЯ ВОЙНА 1920 ГОДА И ПЛАНЫ ПАНТЮРКИЗМА. Цель данной статьи - показать, как кемалисты, начав в 1920г. турецко-армянскую войну, пытались реализовать пантюркистскую программу. Идеология и планы пантюркизма были приняты младотурками, а кемалисты продолжили их политику. Мустафа Кемаль с началом турецко-армянской войны стремился установить прямой сухопутный контакт с Азербайджаном, а также уничтожить Республику Армения. Хотя турецкая сторона преуспела в турецко-армянской войне, советизация Армении не позволила туркам осуществить свои планы.

Кемалисты не смогли достичь своей главной цели, но добились некоторых важных достижений, а именно: регион Карс и провинция Сурмалу перешли к Турции, а Нахичевань и позднее Нагорный Карабах были переданы Азербайджану. С другой стороны, с советизацией региона Турции пришлось формально отказаться от пантюркистской программы, но начался секретный этап развития и трансформации последней, проявления которого станут очевидными в последующие десятилетия.

Ключевые слова: *Республика Армения, пантюркизм, турецко-армянская война, Мустафа Кемаль, националистическое движение.*

Nelli Minasyan, THE TURKISH-ARMENIAN WAR OF 1920 AND THE PROGRAMS OF PAN-TURKİSM. The purpose of this article is to show that the Kemalists were trying to realize the program of Pan-Turkism therefore they started the Turkish-Armenian war in 1920. The ideology and programs of Pan-Turkism were adopted by the Young Turks and the Kemalists continued their policy. Mustafa Kemal, beginning the Turkish-Armenian war, had a purpose to establish direct overland connection with Azerbaijan as well as to destroy the Republic of Armenia. Although the Turkish side had success in the Turkish-Armenian war but the sovietization of Armenia didn't allow the Turks to implement their plans.

The Kemalists failed to accomplish their main goal, but they achieved some important results, namely, the region of Kars and the province of Surmalu passed to Turkey and Nakhichevan and later Nagorno-Karabakh were given to Azerbaijan. On the other hand Turkey officially had to refuse the Pan-Turkism program connected with the sovietization of this region but began the secret development and transformation phase of this ideology the manifestations of which became evident in the further decades.

Key words: *The Republic of Armenia, Pan-Turkism, Turkish-Armenian war, Mustafa Kemal, nationalist movement.*